ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/47

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
«Ավա-2000» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյան, Ա. Պարանյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.05.2019թ. թիվ 26/26-1/8458-2019 գրությամբ «Ավա-2000» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 16.05.2019թ. թիվ 08/15.3/6392-19 գրության հիման վրա, 21.05.2019թ. «Ավա-2000» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը 16.05.2019թ. թիվ 08/15.3/6392-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթին հայտ են ներկայացրել «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն և «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի կողմից 03.05.2019թ.-ին հարցում է ներկայացվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար՝ նշելով մասնակիցների հայտը ներկայացնելու օրը:

Ի պատասխան վերոնշյալ հարցմանը 08.05.2019թ.-ին ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը, որի համաձայն՝ «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 104 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, ինչի արդյունքում «Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է:

Նույն մրցույթի 6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն ընդհանրապես փաստաթղթեր չի ներկայացրել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, որոշեց մերժել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են վերը նշված կազմակերպությունների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Ավա-2000» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 23.05.2019թ. գրությամբ դիմել է «Ավա-2000» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.05.2019թ. թիվ 26/26-1/8458-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար՝ հայտարարված «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով ընթացակարգին և ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետի՝ ներկայացված գնային առաջարկների հիման վրա 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ է զբաղեցրել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 3.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է առաջարկել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ին, 6-րդ չափաբաժնի մասով, ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քարտուղարի էլեկտրոնային փոստից՝ ani.petrosyan@mtcit.am, 03.05.2019թ. (ուրբաթ օրը) ծանուցել է առաջին տեղ զբաղեցրած «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ին (ava2000.ltd@mail.ru) ծանուցումը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն իր ava2000.ltd@mail.ru էլեկտրոնային փոստից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քարտուղարի էլեկտրոնային փոստին՝ ani.petrosvan@mtcit.am, 07.05.2019թ. ներկայացրել է հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետի համաձայն «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և նույն արձանագրության 2.2 կետով որոշեց մերժել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը:

Տեղեկանալով «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին՝ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի ներկայացուցիչները 15.05.2019թ. ներկայացել են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և հայտնել, որ սահմանված ժամկետում ներկայացրել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քարտուղարի Անի Պետրոսյանի համակարգչից մուտք է գործել Ընկերության էլեկտրոնային փոստ և ցույց տվել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի կողմից 07.05.2019թ. ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ եթնակետի համաձայն հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չաւիանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված Փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում Փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կցանկանայինք Ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ փաստացիորեն «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն որակավորման չափանիշի փաստաթղթերը ուղարկել է 07.05.2019թ. հրավերով նախատեսված էլեկտրոնային հասցեին, այնուհետև Ընկերությունը տեղեկացել է որ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը մերժվում է որակավորման չափանիշների փաստաթղթերը չներկայացնելու հիմքով, շտապ այցելել է ՀՀ տրանսպորտի, կապի և

տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն և ընթացակարգի քարտուղարի ներկայությամբ մուտք գործել Ընկերության էլ. փոստի հասցե և ցուցադրել որակավորման փաստաթղթերը ուղարկված լինելու փաստը հավաստող ապացույցը (այս փաստը մեր կարծիքով կփաստի նաև Ընթացակարգի քարտուղարը):

«ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, ըստ որի որակավորման փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Հետևաբար առկա չէ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների խախտում, քանզի նշված ենթակետի համաձայն գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջված փաստաթղթերը, իսկ տվյալ դեպքում առկա է «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետում պատվիրատուի էլ. փոստի հասցեին ուղարկելու ապացույցները:

Հայտնում ենք նաև, որ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն բողոք է ներկայացրել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին (թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/28), որով խնդրել է դադարեցնել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կարիքների համար կազմակերպված «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2019թ. 5-րդ արձանագրությամբ՝ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, ինչպես նաև դադարեցնել 14.05.2019թ. 5-րդ արձանագրությամբ՝ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումից հետո գնահատող հանձնաժողովի կողմից ընդունված բոլոր մյուս որոշումները այն հիմքով, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:»:

Մասնակիցը ներկայացնելով դիրքորոշման լրացում, հայտնել է հետևյալը.

«Սույն ընթացակարգի շրջանակներում հայտնել էինք նաև, որ դիրքորոշմամբ բարձրացված հարցի վերաբերյալ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն բողոք է ներկայացրել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին (թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/28), որով խնդրել է պարտավորեցնել «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ մրցույթի գնահատող

հանձնաժողովին դադարեցնել 14.05.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 2.2 կետով «Ա4Ա-2000» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով մերժելու և «ՏԿՏՏՆ-2ԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 14.05.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 2.2 կետով «Ս4Ս-2000» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով մերժելու մասին որոշումից հետո Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով ընդունած բոլոր մյուս որոշումները դադարեցնելու մասին որուշումները:

Արդյունքում 2019թ. հունիսի 11 -ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/28 որոշմամբ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարվեց և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշեց

- *Պարտավորեցնել «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 14.05.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 2.2 կետով «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով մերժելու մասին որոշումը:*
- *Պարտավորեցնել «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագյավ հրատապ մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 14.05.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 2.2 կետով «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով մերժելու մասին որոշումից հետո Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով ընդունած բոլոր մյուս որոշումները:*

2019թ. հունիսի 11-ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/28 որոշման արդյունքում.

1. Նախ, արձանագրվեց, որ 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցը «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշին հիմնավորող փաստաթղթերը:

2. Եվ, երկրորդ, դադարեցվեց 14.05.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 2.2 կետով «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով մերժելու մասին որոշումը, այսինքն այլև առկա չէ «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի մասնակցության դադարեցում տվյալ ընթացակարգով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/28 իրավապարտադիր որոշումը՝

Բողոքներ քննող անձին խնդրել են «Ավա-2000» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2019/47 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

«Ավա-2000» ՍՊԸ-ն հայտով ներկայացրած թիվ 1 հավելվածով՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմումում, որպես ընկերության էլեկտրոնային փոստի հասցե է նշել ava2000.ltd@mail.ru:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետի՝ ներկայացված գնային առաջարկների հիման վրա 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ է զբաղեցրել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 3.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է առաջարկել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ին, 6-րդ չափաբաժնի մասով, ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քարտուղարի էլեկտրոնային փոստից՝ ani.petrosyan@mtcit.am, 03.05.2019թ. (ուրբաթ օրը) ծանուցել է առաջին տեղ զբաղեցրած «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ին (ava2000.ltd@mail.ru) ծանուցումը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետի համաձայն «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և նույն արձանագրության 2.2 կետով որոշել է մերժել «ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի հայտը:

«ԱՎԱ-2000» ՍՊԸ-ի ava2000.ltd@mail.ru էլեկտրոնային փոստի արտատպման համաձայն՝ Ընկերությունը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին՝ ani.petrosvan@mtcit.am, 07.05.2019թ.-ին ներկայացրել է հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.05.2019թ. թիվ 26/26-1/8458-2019 գրությամբ «Ավա-2000» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ .... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝ 43-րդ կետի 4-րդ եթնակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը

հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու» կարգի՝ 16-րդ կետի համաձայն հրավերով նախատեսվում է, որ՝

1) բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության կողմից հայտարարված «ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/4Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցնող մասնակից է ճանաչել «Ավա-2000» ՍՊԸ-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քարտուղարի կողմից 03.05.2019թ. ani.petrosyan@mtcit.am էլեկտրոնային փոստի հասցեից, «Ավա-2000» ՍՊԸ-ի ava2000.ltd@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկվել ծանուցում, որով առաջարկվել է ուղարկել որակավորման փաստաթղթերը:

Մասնակիցը ava2000.ltd@mail.ru էլեկտրոնային փոստից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին՝ ani.petrosvan@mtcit.am, 07.05.2019թ.-ին ներկայացրել է հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Տվյալ դեպքում մեջբերված հոդվածների դրույթների՝ գործի փաստերի հետ համադրման արդյունքում պարզ է դառնում, որ «Ավա-2000» ՍՊԸ-ն կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, այն է՝ քարտուղարի ani.petrosvan@mtcit.am էլեկտրոնային փոստի հասցեից 03.05.2019թ.-ին ստանալով վերը նշված կարգի կետին համապատասխան ծանուցում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում՝ 07.05.2019թ.-ին /3 աշխատանքային օրվա ընթացքում/ Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել որակավորման փաստաթղթերը:

Տվյալ դեպքում առկա է «Ավա-2000» ՍՊԸ-ի կողմից համապատասխան փաստաթղթերը քարտուղարի համապատասխան էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու ապացույցը, որպիսի պայմաններում այդ հանգամանքը չի կարող համարվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որը նախատեսված է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ավա-2000» ՍՊԸ-ն չի խախտել գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ սույն գործի փաստերի համաձայն, հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցելով առաջին տեղն զբաղեցրած մասնակցին և առաջարկելով ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը՝ խախտել է ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով

գնումների կարգը հաստատելու մասին» կարգի 16-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները, այն է՝ ծանուցումն ուղարկել է էլեկտրոնային փոստի, այլ ոչ թե համակարգի՝ armeps ոչ ավտոմատ համակարգի միջոցով, ինչն և իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտմանը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.05.2019թ. թիվ 26/26-1/8458-2019 գրությամբ «Ավա-2000» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**